ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

12 մարտի 2026 թվական

6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 16.50

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՛ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 10 անդամ՝

Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,

Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Արման Բաբաջանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Արմեն Քոչարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Քրիստինե Վարդանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Քրիստինա Վարդանյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել Ծարավ աղբյուրի փողոցի և Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի շենքի դիմացի քայքայված ասֆալտի ուղղությամբ, քանի որ բուժման նպատակով՝ մարդկանց անցուդարձն այդ հատվածներում բավականին շատ է լինում:

Հարցս հետևյալն է՝ որոշ ժամանակ շփում եմ ունեցել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն պարոն Բեգոյանի հետ՝ ծառերի փոխարինման հետ կապված: Կար պայմանավորվածություն, որ թթվածնային քանակը պետք է քիչ չլինի, քան փոխարինվող ծառը: Արդյոք այդ պայմանավորվածությունը պահում եք, թե՞ ոչ, ի՞նչ ծառերով եք փոխարինում, արդյոք օգտվում եք տնկարանից և ի՞նչ իրավիճակ է տիրում տնկարանում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Արմեն Բեգոյան

- Ինչպես հայտարարել ենք տնկարանն ընդլայնվել է՝ 2023թ.-ից սկսած մինչ այժմ, 1 հա-ից դառնալով 22 հա: Սա վերաբերում է բաց գրունտին:

2023 թվականից՝ իմ պաշտոնավարմանը վերադառնալուց հետո, տնկարանը եղել է այն մակարդակի, ինչպես թողել էի 4 ամիս պաշտոնավարումս դադարեցնելուց հետո:

Քաղաքապետ Հայկ Մարությանի պաշտոնավարման օրոք ջերմոցատնկարանային տնտեսությունը, օգտագործելով ձմռան ամիսներին գազի ծախս, 5000 քմ տնկարանում իրականացվում էր վարունգի աճեցում:

2018-2022թթ. այնտեղ վարունգ է աճեցվել՝ պատճառաբանելով, որ ձմռան ամիսներին «նազրվան» տեսակի վարունգը թանկ է: Իհարկե ես տեղյակ չէի, թե ինչ նպատակով էր օգտագործվում այդ վարունգը: Սա է եղել մեր տնկարանի իրավիճակը, դրան ավելացրած 1 հա հասնող մաքրված տարածք, իսկ մնացած 20-25 հեկտար տարածքն ամբողջը բամբուկներով, ծանծաղուտներով, սերտաճած ծառերով, մացառներով մի տարածք էր, և կազմակերպությունից պահանջեց 2 տարվա ռեսուրս՝ այդ տարածքը մաքրելու և կարգի բերելու համար:

Ինչ վերաբերում է փոխարինվող ծառերին՝ ուզում եմ ևս մեկ անգամ նշել, որ յուրաքանչյուր փողոցում, կատարում ենք ծառերի փոխարինման աշխատանքներ՝ միևնույն հեռավորության վրա: Մինչ այդ, գրեթե բոլոր փողոցներում լինում են տնտեսվարողների կողմից փակված բնաբաժակներ՝ իրենց խանութների և սրճարանների դիմաց, կամ բացված ավտոկայանատեղիներ, որոնք փակում ենք այդ աշխատանքները կատարելու ժամանակ: Ստացվում է այնպես, որ ծառերի փոխարինման ժամանակ, գրեթե մշտապես հատված ծառերի քանակն ավելի քիչ է լինում, քան տնկված ծառերինը: Օրինակ՝ Թումանյան փողոցում տնկվել է 70 ծառ ավել, քան երբևէ այնտեղ եղել է, բացվել է լրացուցիչ 70 բնաբաժակ:

Ինչ վերաբերում է օդի ֆիլտրման՝ ծառերի օգտակար գործողության գործակցին, ապա այն փողոցներում, որտեղ քիչ թե շատ հնարավոր են՝ կազմակերպության կողմից ընտրվում են մեծ սաղարթով ծառեր և կա մի քաղաքականություն՝ ուշադրություն ենք դարձնում այդ ծառերի չորադիմացկունությանը, որովհետև ինչպես ամբողջ աշխարհում,

այնպես էլ Երևանում, տարեցտարի ոռոգման ջուրը խնդիր է դառնում, գլոբալ տաքացման հետ մեկտեղ: Բացառությամբ պետական, կառավարական, որևէ հատուկ շինությունների դիմացի հատվածներից, որտեղ տնկվում են ավելի դեկորատիվ ծառատեսակներ, որպեսզի չփակվի այդ շենքերի ճարտարապետական տեսքը, մնացած բոլոր վայրերում տնկվում են ֆունկցիոնալապես մի քանի անգամ ավելի բարձր ֆունկցիոնալություն ունեցող ծառեր՝ ավելի բարձր սաղարթ և ցողուն ձևավորող ծառատեսակներ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

-Առաջին հարցը վերաբերում է Վարդաշենի բնակիչների խնդրին:

Այս հարցը միշտ մեր խմբակցության ուշադրության կենտրոնում է: Չնայած արդեն հնչեցվեց, բայց ես ուզում եմ հավելյալ հարցադրում անել՝ ի՞նչ ճակատագրի են արժանանալու մուլտերի հանրակացարանի բնակիչները՝ 18 ընտանիք: Վարդաշենի հ.68ա և հ.66/1 շենքերի բնակիչների խնդրի հետ համատեղ այս հարցը լուծվելու՞ է, ի՞նչ փուլում է:

Տիգրան Ավինյան

-Տիկին Ավետիսյան, ինչպես այսօր հայտարարեցի՝ Վարդաշենի բնակիչներին իմ տված խոստումը ոչ միայն ուղղակի ուժի մեջ է, այլ շուտով կընդունվի ՀՀ կառավարության որոշում և այդ որոշման հիման վրա կսկսենք լուծել բնակիչների բնակարանային խնդիրների լուծման հարցը:

Ինչ վերաբերում է Ձեր նշած մյուս շենքին՝ ես այդ շենքի բնակիչների հետ նույնպես հանդիպել եմ և տեղեկացրել, որ երկու հիմնական շենքի հարցերի լուծումից հետո, կքննարկվի նաև իրենց հարցը:

Աննա Ավետիսյան

-Հաջորդ հարցը հնչեցնեմ.

Երևանի Արշավիր Շավարշյանի անվան հ.40 հիմնական դպրոցը 2024թ. փակվել է: Իմ կողմից կատարված հարցումների արդյունքում պարզվեց, որ այդ տարածքում, այսինքն՝ Վրացյան, Վարդանանց, Երվանդ Քոչարի, Չարենցի փողոցների, Տիգրան Մեծի պողոտայի հատվածում, մոտավորապես՝ 350-400 երեխա հերթագված սպասում է մանկապարտեզ հաճախելու:

Հարցս և առաջարկս է՝ այդ դպրոցի շենքը կարո՞ղ է դիտարկվել որպես մանկապարտեզ, որպեսզի ծառայի այդ երեխաներին: Ծնողներից շատերը պատրաստ են երեխաներին տանել մի փոքր ավելի հեռու մանկապարտեզ և այդքան հերթի չսպասեն:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

Մարգարիտ Խաչատրյան

-Երևանի Արշավիր Շավարշյանի անվան հ.40 հիմնական դպրոցը վերակազմակերպվել է՝ միացման ձևով միանալով Երևանի Նար-Դոսի անվան հ.14 հիմնական դպրոցին, իսկ շենքը, որպես պետական գույք, հետագայում ՀՀ կառավարության որոշմամբ հանձնվել է Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնին և շենքը գործում է այդ նպատակով:

Տիգրան Ավինյան

-Տիկին Ավետիսյան, Ձեր առաջարկը փաստացի չի կարող իրականացվել, բայց այնուամենայնիվ, նմանատիպ լուծումներ մենք տալիս ենք: Օրինակ՝ ունենք Դավթաշենի գյուղի հատվածում, որտեղ դպրոցի շենքը վերակազմակերպվելու է և դառնալու է մանկապարտեզ:

Նմանատիպ քննարկում ունեինք նաև Ախպարաշենի հատվածում՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի գործընկերների հետ բանակցությունները բավական երկար տևեցին և վերջնական հանգուցալուծում դեռ չկա: Պետք է ամփոփենք, որպեսզի մարդիկ հասկանան այս ծրագիրը կարողանալու ենք իրականացնել, թե ոչ:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Առաջին հարցը Մյասնիկյան պողոտան Նոր Նորքին միացնող ճանապարհահատվածի վերաբերյալ է: Ցանկանում եմ իմանալ այս մասով ի՞նչ զարգացումներ ունենք՝ հաշվի առնելով քաղաքի խցանումները:

Երկրորդ հարցս «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» համայնքային հիմնարկի վերաբերյալ է, որի մասին այսօր խոսեցինք: Ցանկանում եմ իմանալ, ե՞րբ է աշխատելու այդ կենտրոնը, ե՞րբ են համալրվելու հաստիքները, և ե՞րբ կարող ենք կենտրոնի գործունեության առաջին արդյունքներն ակնկալել:

Տիգրան Ավինյան

-Պարոն Բաբաջանյան, այս տարվա ապրիլ ամսին կսկսվի ճանապարհի շինարարությունը, Գյուրջյան փողոցի հիմնանորոգումը: Դա կդառնա առաջին հերթին այլընտրանքային ճանապարհ՝ Մյասնիկյան պողոտայից ուղիղ միացում Նորք-Մարաշ վարչական շրջանով դեպի Նոր Նորք: Մարդիկ կունենան երկրորդ այդպիսի, ամբողջապես ֆունկցիոնալ ճանապարհ դեպի Նոր Նորք վարչական շրջան:

Այդտեղ նաև պլանավորել ենք կանոնակարգել ամբողջ ենթակառուցվածքները, բոլոր մալուխներն անցկացնել գետնի տակ և արդեն իսկ բոլոր խնդիրները լուծված են:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Պարոն քաղաքապետ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունն արդեն դիմել է ամբողջ գազատարը վերակառուցելու թույլտվություն ստանալու և Նորք-Մարաշ վարչական շրջանի գերեզմանատնով անցնող գազատարը վերատեղադրելու համար, աշխատանքները համաձայնեցված են նաև «Վեոլիա Ջուր» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունների հետ:

Բոլոր կոմունիկացիաներն անցկացված են գետնի տակ, այդ թվում նաև արտաքին լուսավորության մալուխները: Ապրիլ ամսին կունենանք ճանապարհի շինարարությունը, զուգահեռ նաև կոմունիկացիան և ճանապարհը:

Տիգրան Ավինյան

-Արձանագրենք նաև, որ սա ներդրված է որպես կառուցապատողներից մեկի ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջ՝ հաշվի առնելով նաև իր պատրաստակամությունը: Այդքան կոմունիկացիա անցկացնելուց հետո այդ ճանապարհը նաև խնդիրներ էր ունենալու և ամբողջապես այս աշխատանքներն իրականացնելու է հենց այդ ընկերությունը: Դրա շարունակությունը էստակադայի հարցն է: Էստակադայի կառուցման մասով խոսել ենք նաև «Վաղարշ և որդիներ կոնցեռն» ՍՊ ընկերության հետ: Պետք է նաև պարոն Ծառուկյանի ներկայացուցիչներին հրավիրենք, որպեսզի իմանան, որ իրենք էլ կարող են ունենալ մասնակցություն էստակադայի կառուցման համար, որովհետև իրենց շենքերը գտնվում են այդտեղ և այդ էստակադայի կառուցումից վստահաբար կշահեն: Էստակադայի կառուցումն արդեն թույլ կտա ոչ միայն բարձրանալուց գնալ դեպի Նոր Նորք վարչական շրջան, այլ իջնելիս՝ միանգամից կհայտնվեն Մյասնիկյան պողոտայի ներքևի հատվածում՝ Սարալանջի կամրջից մի փոքր վերև՝ դեպի կենտրոն:

Երկրորդ հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Պարոն Բաբաջանյան, «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» համայնքային հիմնարկի մասին նախ ասեմ, որ չնայած ավագանու որոշումը կայացվել էր 2025թ. նոյեմբեր կամ դեկտեմբեր ամիսներին, հիմնարկի գրանցումը տեղի է ունեցել 2026թ. հունվարին: Ստրատեգիական հաստիքներն այս պահի դրությամբ համալրված են 60%-ով:

Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ այս ամսվա ընթացքում, գործակարգավարական խորհրդակցության ժամանակ, համայնքային հիմնարկի տնօրեն էդուարդ Այվազյանը կներկայացնի հիմնարկի գործունեության առաջին արդյունքների մասին, որովհետև դրանք արդեն կան՝ «Երևանի ավտոբուս» և «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերությունների հետ համատեղ աշխատանքի արդյունքում, իսկ դիսպետչերիզացիայի պիլոտային ներդրումը նախատեսում ենք սկսել մայիս ամսին:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Քըրք Քըրքորյան փողոցից դեպի Նոյ թաղամաս ձգվող հատվածում բազմահարկ տասնյակ շենքեր են կառուցվում՝ տասնյակ հազարավոր բնակարաններ են լինելու ու անընդհատ նոր շինթույլտվություններ են տրվում: Հանրային քննարկում է լինելու և ուզում եմ հասկանալ այդտեղ նախատեսվում է արդյոք այլընտրանքային ճանապարհներ կառուցել, օրինակ՝ Մոնթե Մելքոնյան փողոցի կողմից կամ Քըրք Քըրքորյան փողոցի՝ Շինարարների փողոց բարձրացող հատվածից: Անհնար կլինի, եթե տասնյակ հազարավոր մարդիկ ժ.18.00-ին տուն գնալիս օգտվեն այդ մեկ լուսացույցից, մոտավորապես նույն վիճակն է լինելու, ինչ օդանավակայան գնալու ճանապարհի լուսացույցի հատվածում:

Ուզում եմ նաև հասկանալ այդ տարածքում առկա՞ է համայնքային հող, որ մանկապարտեզ, դպրոց կամ առողջության կենտրոն կառուցվի:

Տիգրան Ավինյան

-Ճանապարհի մասով հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Արման Լազրյանը:

Արման Լազրյան

-Այդ հողերը համայնքային չեն, այլ պետական հողեր են:

Տիգրան Ավինյան

-Առկա է նախագիծ, որն առաջարկում են կառուցապատողները: Նախագծով առաջարկում են Նոյ թաղամասը միացնել Մոնթե Մելքոնյան փողոցին և դրանք անցնում են Դալմայի այգիների տարածքով:

Մեր դիրքորոշումն ընդհանուր առմամբ դրական է, նախորդ տարվա ավարտին էինք սպասում, որպեսզի այդ հողերի վարձակալության ժամկետներն ավարտվեին: Բոլոր հողերի վարձակալության ժամկետներն ավարտվել են, որևէ իրավունք նրանք չունեն այդ հողերի նկատմամբ, դրանք անտառային հողեր են և ոչ ոքի ոչինչ այդտեղ չի տրվելու: Միակ հատվածը, որ կարող ենք հատկացնել ճանապարհի համար, դա նախատեսում ենք՝ մեր դիրքորոշումը դրական է, սպասում ենք ՀՀ կառավարության դիրքորոշմանը:

Ինչ վերաբերում է ընդհանուր սոցիալական ենթակառուցվածքին՝ «Երևաննախագիծ» ՓԲ ընկերությունն ունի հանձնարարական գլխավոր հատակագծում, մասնավորապես՝ նոր ստեղծվող թաղամասերի տարբեր հատվածներում առանձնացնել սոցիալական ենթակառուցվածքի համար համայնքային հողեր, որպեսզի կարողանանք այդ տարածքներում կառուցել մանկապարտեզներ, դպրոցներ, առողջության կենտրոններ:

Ուզում եմ տեղեկացնել, որ թաղամասային զարգացումների մեր քաղաքականությամբ, որևէ մի տեղ Դուք չեք հանդիպի, որ մենք զարգացնենք կոմպլեքս թաղամաս և այս բոլոր ենթակառուցվածքներն արդեն իսկ նախատեսված չլինեն:

Ռոբերտ Ծովյան

-Հաջորդ հարցը հնչեցնեմ. «Կարմիր գիծ» կայանատեղիների տուգանքների մասին գրեթե միշտ մարդիկ ծանուցվում են հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով: Այսինքն՝ ծանուցումը պատշաճ չի իրականացվում: Խնդրում եմ այս հարցին լուծում տալ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Այս խնդրի կարգավորումը լինելու է ս.թ. մարտի վերջին հրապարակվելիք բջջային հավելվածով: Ունենալու ենք բջջային հավելված, որով ստանալու են ծանուցումներ, նաև հնարավորություն է լինելու վճարումներն ի սկզբանե ակտիվացնել, որպեսզի քարտից գանձում իրականացվի և տուգանքի չհասնի:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Էվոյանը:

Հայկ Էվոյան

-Ուզում եմ տեղեկացնել, որ «sms» ծանուցումը գործում է, քաղաքացիները ստանում են հաղորդագրություններ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

-Մինչ հարցին անրադառնալը, ցանկանում եմ քաղաքային իշխանության ուշադրությունը հրավիրել Ավան վարչական շրջանի Չարենցի թաղամասի հ.17 շենք տանող ճանապարհի աստիճանների խայտառակ իրավիճակին, որի հետ կապված գրություն եմ գրել: Ավան վարչական շրջանի ղեկավար պարոն Հակոբյանի հետ քննարկել ենք և նա պատրաստակամ է այդ հարցի լուծմանը, բայց կարծես ցանկում այս հասցեն չկա:

Համառորեն ուզում եմ հորդորել, որ այդուհանդերձ որոշակի հատկացում կատարվի և այդ տասամյակներ առաջ վերանորոգված աստիճանները վերանորոգվեն:

Այժմ անրադառնամ հարցին՝ մեզ է դիմել քաղաքացի Լուսինե Սարգսյանը, ով մինչև 2024 թվականի գարուն աշխատել է «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ում: Այդ ժամանակ նրան ազատել են աշխատանքից, նա դիմել է դատարան: 2025 թվականի աշնանը դատարանը նրան վերականգնել է աշխատանքի, կատարողական թերթիկը քաղաքապետարան մուտքագրելուց հետո՝ 2026 թվականի փետրվարի 27-ին, ՀՈԱԿ-ի տնօրեն Հ.Առաքելյանը հրաման է ընդունել, որով պարտավորվել է կատարել դատարանի որոշումը և վերականգնել Լուսինե Սարգսյանին նախկինում զբաղեցրած՝ համակարգչային

օպերատորի հաստիքում: Սակայն նույն օրը, պարոն Ավինյան, Ձեր որոշումն է ընդունվել՝ նույն ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին, և որոշման 4-րդ կետում գրված է, որ սույն որոշման կատարման գործողությունները տարածվում են 2026 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա: ՀՈԱԿ-ի ղեկավար Առաքելյանի ծանուցմամբ՝ հղում անելով հաստիքացուցակի փոփոխությանը, քաղաքացուն առաջարկվել է կենդանի խնամող կամ հավաքարարի աշխատանք: Քաղաքացին ունի բողոք, որ այդտեղ միտում կա, թե ինչու՞ 2 տարի հաստիքացուցակը չէր փոխվում, և միայն իր դատարանի որոշումից հետո փոխվեց, և ասում է, քանի որ նա յուրային չէ, նա օտար է և իր համար նման գործողության էին գնացել:

Այժմ, Ձեր միջամտությամբ, իրավիճակն որևէ կոմպրոմիսների դաշտ բերելու, և քաղաքացուն որևէ լուծում առաջարկելու հրատապություն ունի:

Տիգրան Ավինյան

- Պարոն Սուքիասյան, անկեղծ ասած ես կոնկրետ դեպքին ծանոթ չեմ, բայց ասեմ հետևյալը՝ այն աշխատակիցները, ում աշխատանքը համարվել է անարդյունավետ, որևէ տեսակի միջամտության պարագայում, ես կոմպրոմիսների պատրաստ չեմ: Ես չեմ կարող հիշել, թե սա որ դեպքն է, միգուցե պարոն Առաքելյանն այժմ կներկայացնի, թե սա ինչ դեպք է: Ուզում եմ Ձեզ վստահեցնել, որ ամեն պարագայում մեզ մոտ գնահատվում է աշխատակցի ոչ թե մեզ յուրային լինելը, որովհետև այս համակարգում 33000 աշխատակից է աշխատում, եթե առաջնորդվեինք յուրայիններով, ապա շատ մարդկանց պետք է հեռացնեինք աշխատանքից: Ենթադրում եմ որևէ խնդիր եղել է:

Պարզաբանումներ կներկայացնի «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿի տնօրեն Հարություն Առաքելյանը:

Հարություն Առաքելյան

-Աշխատակիցն ազատվել է աշխատանքից՝ համաձայն Աշխատանքային օրենսգրքի: Այն պնդումը, որ միտում է եղել աշխատակցից ազատվելու համար, այդ պատճառով հաստիքացուցակ է փոխվել, պետք է նշեմ, որ աշխատակցի ազատումից հետո այդ հաստիքում ոչ մի այլ աշխատակից չի ընդունվել: Ինչպես այդ հաստիքում, նաև մեկ այլ հաստիքում ևս, որոնց աշխատանքային պարտականությունները լիազորվել են՝ մի դեպքում՝ քաղաքապետարանի զանգերի սպասարկման կենտրոնին, մյուս դեպքում՝ կազմակերպության մեկ այլ աշխատակցի: Այս 2 հաստիքը դարձել են անարդյունավետ, և չեն օգտագործվել կազմակերպության կողմից, և հենց այս փաստերի հիման վրա որոշում է կայացվել, որ այս հաստիքները պետք է կրճատվեն: Այս հաստիքների համար նախատեսված աշխատավարձերը պետք է ուղղվեն մյուս աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմանը:

Աշխատակցի աշխատանքից ազատման հետ կապված՝ Աշխատանքի և առողջապահության տեսչական մարմինն աշխատանքային պայմանագրի լուծումը

համարել էր իրավաչափ, սակայն առաջին ատյանի դատարանն այն իրավաչափ չի համարել: Չեմ ցանկանում մեկնաբանել դատարանի որոշումը:

Ինչ վերաբերում է դատարանի որոշմանը, ցանկանում եմ նշել, որ դատարանը երկու կետ է պարտադրել կազմակերպությանը՝ վերականգնել աշխատանքի, որն արդեն կատարվել է, հաջորդ կետը՝ վճարել հարկադիր պարապուրդը, որը ևս կատարվել է: Այս ամենից հետո աշխատակցի հետ հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով, որտեղ նշվում է, որ կազմակերպությունում առկա ազատ հաստիքները կարող են առաջարկվել տվյալ աշխատակցին, հաշվի առնելով աշխատակցի ունակությունները, մասնագիտական փորձը և կրթությունը: Հենց այդպես էլ արվել է: Ըստ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատակցին տրվել է սահմանված ժամկետ, որից հետո, եթե աշխատակիցը դրական կամ բացասական որևէ պատասխան չտա՝ վերջին պայմանագիրը ևս լուծված կհամարվի:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Առաջին հարցը վերաբերում է Շենգավիթ վարչական շրջանի Արարատյան փողոցի հ.62/1 և հ.62/2 շենքերին, որոնց նկուղային հարկերում լցվել են կեղտաջրեր և շենքերը սարսափելի վիճակում են, ինչպես նաև Շիրակի փողոցի հ.3 հասցեում գտնվող Երևանի Հովհաննես Հովհաննիսյանի անվան հ.52 հիմնական դպրոցին, որտեղ նույնպես արտաքին կոյուղատար խողովակը վնասված է և կեղտաջրերը լցվում են դպրոցի բակ և շատ լուրջ խնդիր են առաջացնում:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը հրատապ կարգով այս խնդիրներին լուծում տալու համար:

Երկրորդ հարցը վերաբերում է բազմաբնակարան շենքերի նկուղներին: Արդյոք քաղաքային իշխանությունները պատրաստվում են ի վերջո բարեկարգել այդ նկուղային հատվածները, որոնք գտնվում են վատ վիճակում: Այդ կոյուղաջրերի պատճառով են դրանք վնասվել:

Ես համառորեն շարունակում եմ հնչեցնել այս հարցը, քանի որ 2025թ. քաղաքացիական պաշտպանության ոլորտի աջակցության ծրագրում գրված է՝ ուսումնասիրել բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերը:

Ինչի՞ համար եք ուսումնասիրում, արդյունքը ո՞րն է:

Տիգրան Ավինյան

-2022թ. քաղաքապետարանը՝ վարչական շրջանների, համատիրությունների միջոցներով, մեկ անգամ ամբողջ քաղաքում նմանատիպ աշխատանքներ կազմակերպել է: Շարունակական ուսումնասիրությունը նրա համար է, որ գնահատենք, թե ինչ վիճակում են գտնվում ընդհանուր առմամբ ապաստարանի նորմատիվներին համապատասխանող

նկուղները: Իրականում ոչ բոլոր նկուղներն են համապատասխանում ապաստարանի նորմատիվին, շատ նկուղներ կան, որ որպես ապաստարան չեն կարող ծառայել՝ տարբեր պատճառներով:

Ձեր մատնանշված ահազանգերի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Տիգրան Գաբրիելյանը:

Տիգրան Գաբրիելյան

-Տեղեկացնում եմ, որ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներն այսօր այցելել են Երևանի Հովհաննես Հովհաննիսյանի անվան հ.52 հիմնական դպրոց, կատարվել է ուսումնասիրություն և պարզվել է, որ դպրոցի կոյուղատարին միացված է սեփական տան կոյուղի: Բնակչին տեղեկացվել է, որպեսզի տան կոյուղագիծն առանձնացնի դպրոցի կոյուղագծից: Այդ դեպքում, եթե խնդիրը չկարգավորվի, ապա դպրոցի կոյուղագծից է խնդիրը:

Ինչ վերաբերում է Արարատյան փողոցի հ.62/1 և հ.62/2 շենքերին, տեղեկացնեմ, որ այդտեղ հաճախ են տեղի ունենում խցանումներ և իրականացվում է կոյուղատարի մաքրում: Հարցը լրացուցիչ կուսումնասիրվի և կտրվի լուծում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան, խնդրեմ:

Արմեն Քոչարյան

- Առաջին հարցը կապված է Ավան վարչական շրջանի հետ՝ կան մի քանի խնդիրներ՝ կապված համատիրությունների հետ:

Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջանի հ.28/2 շենքի շքամուտքը գտնվում է վատ վիճակում, պատուհանները կոտրված են, նույն իրավիճակում է գտնվում հ.1/18 շենքը, Ծարավ աղբյուրի հ.26/2 հասցեում ունենք ջրահեռացման խնդիր: Քաղաքացիները չեն կարողանում այդ հարցը լուծեն, դիմել են մի քանի տեղ, սակայն հարցը լուծում չի ստացել, ինձ խնդրեցին այս հարցը բարձրաձայնել և լուծում տալ այս հարցին:

Նմանատիպ խնդիրներ ունի Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջանի հ.2/7 շենքը, այստեղ աղբահանության, վերելակի հետ կապված խնդիրներ կան, չունեն խաղահրապարակ: Նույն խնդիրն առկա է Ավան-Առինջի հ.2/3 շենքում, այստեղ նաև շքամուտքն է գտնվում շատ վատ վիճակում: Համատիրությունը խոսք է տվել Ավան-Առինջի հ.2/3 շենքի տանիքը վերանորոգել, սակայն չի վերանորոգում: Խնդրեցին բարձրաձայնել, որպեսզի լծակներն օգտագործելով ստիպենք համատիրությանն աշխատել:

Հաջորդ հարցս վերաբերվում է Դավիթ Անհաղթի փողոցի հ.11/12 շենքին: Համատիրության ղեկավարը հրավերով մասնակցել եմ համատիրության ժողովին, խնդիրներ եմ բարձրաձայնել, որից մեկը՝ աղբահանության հետ կապված խնդիրն արդեն իսկ լուծել եք:

Երկրորդ խնդիրն այն է, որ 270 բնակարան ունեցող շենքի շինթույլտվության մեջ չի նախատեսվել խաղահրապարակ, մոտ 60 բնակիչ խնդրել է բարձրաձայնել այս հարցը:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Ավան վարչական շրջանի ղեկավար Վահե Հակոբյանը:

Վահե Հակոբյան

- Վարչական շրջանի ընթացիկ ծրագրերով միշտ իրականացնում ենք վերելակների փոխարինման, բակերի հիմնանորոգման և բազմաբնակարան շենքերի վերանորոգման աշխատանքներ:

Պարոն քաղաքապետ, ինչպես Դուք բազմիցս նշել եք, այդ աշխատանքների մեծ մասի ուղիղ պատասխանատուն մենք չենք, բայց մենք իրականացնում ենք նման աշխատանքներ: Այս պահին ինձ մոտ չէ փոխարինման ենթակա վերելակների ցանկը, բայց կարող եմ նշել, որ Ավան վարչական շրջանում այս տարի փոխարինման ենթակա է 56 վերելակ, պետք է վերանորոգվի 12 բազմաբակարան շենքի մուտքեր: Ցանկերը պատրաստ լինելուն պես ավելի մանրամասն կքննարկենք պարոն Քոչարյանի հետ: Հիմնական խնդիրները կապված են համատիրությունների հետ, խաղահապարակի հարցն էլ տեղում կդիտարկենք:

Տիգրան Ավինյան

- Պարոն Քոչարյան, ֆեյսբուք սոցիալական ցանցում հրապարակված է փոխարինվող բոլոր վերելակների հասցեները: Կարող եք այդ ցանկը նայել:

Հաջորդ հարցին կպատասխանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը:

Արտակ Հովակիմյան

- Պարոն քաղաքապետ, տեղեկացնում եմ, որ տվյալ թաղամասի բնակիչները մեզ դիմել էին երկու հարցով, մեկը՝ ինչպես ասեց պարոն Քոչարյանը, արդեն կատարված է, իսկ երկրորդը՝ կապված բակային հատվածի հետ, մենք սպասում ենք եղանակային պայմանները լավանան: Ինչպես մյուս հատվածներում ենք բացազատում անում և խաղահրապարակներ կառուցում, նույնն այդ հատվածում՝ խոստացել ենք, որ անպայման կկատարենք բացազատումներ, ապօրինի կառուցված շինությունները կքանդվեն և տեղում կկառուցվի խաղահրապարակ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Քրիստինե Վարդանյան, խնդրեմ:

Քրիստինե Վարդանյան

-Վերջին տարիներին, երբ սկսվեց քաղաքում ծառերի փոխարինման աշխատանքները, մարդկանց մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ առողջ, կենսունակ ծառերը փոխարինվում են ոչ արդյունավետ, ոչ օգտակար, ոչ պիտանի

ծառերով: Ես ուզում եմ, որ ներկայացվի բնակիչներին կոնկրետ ինչպիսի ծառեր են հատվում և ինչպիսի ծառերով են փոխարինվում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Արմեն Բեգոյան

-Այս հարցում որոշակի մեղավորություն ունեն հանրային որոշ լրատվամիջոցներ, ովքեր տպագրում են ոչ մասնագետների խոսույթները, ովքեր շատ հեռու են բուսաբանությունից: Ժողովրդին ենթարկում են սթրեսի, իսկ ունկնդրող երևանցին չի խորանում, թե տեղեկություն տվողը բուսաբանության հետ կապ ունի, թե ոչ: Այստեղ խնդիր ունենք և ես ևս մեկ անգամ կբարձրաձայնեմ այդ խնդիրը:

Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը (որտեղ իրենց պրակտիկան են անցկացնում նաև համալսարանի ուսանողները) գիտական, մասնագիտական հիմնարկ է, որտեղ աշխատում են բուսաբանական գիտությունների բազմաթիվ թեկնածուներ, պրոֆեսորներ: Հետևաբար, ես՝ որպես ղեկավար, պարտավոր եմ լսել բուսաբանների կարծիքը, ինչը և արվում է: Հավատացնում եմ Ձեզ՝ բոլոր այն փողոցներում, որտեղ իրականացվում են ծառերի փոխարինման աշխատանքները, 10 անգամ գիտնականներն ուսումնասիրում են, նոր 1 անգամ կտրում:

Երեկ չհաջողվեց մանիպուլացնել Պռոշյան և Պարոնյան փողոցները, որովհետև քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությունը կազմակերպեց ասուլիս և բոլոր լրատվականները նկարեցին ծառերի վիճակը և հետևաբար աղմուկ չբարձրացավ: Դրանից առաջ չէինք մտածել, որպեսզի Ամիրյան փողոց էլ հրավիրեինք լրատվամիջոցներին: Դասեր ենք խաղել և հետագա մեր գործողություններում այդ դասերը կիրականացնենք:

Այն ծառերը, որոնք հեռացվում են, փոխարինվում են, վաղուց իրենց կենսունակության տարիքն ապրել են և հանդիսանում են Երևան քաղաքում վնասատուների բարգավաճման վայրեր, որը վեգետացիայի սկզբում արդեն տեղափոխվում է ամբողջ քաղաքի կանաչ տարածք: Բացի նրանից, որ ոչինչ չեն անում, նաև վնասատուների տարածման տեղ են հանդիսանում:

Պռոշյան և Պարոնյան փողոցներում ծառերը փոխարինվել են սոֆորա ճապոնական ծառատեսակով, իսկ Ամիրյան փողոցում՝ կատալպա ծառատեսակով:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Քրիստինա Վարդանյան, խնդրեմ:

Քրիստինա Վարդանյան

- Հարցս հետևյալն է՝ բազմիցս, ավագանու տարբեր նիստերին, լրատվական դաշտում անվերջ մեկ հարցազրույց եք Դուք հրապարակում: Պետք է այստեղ արձանագրել, որ փաստացի մենք աշխատեցինք «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ում երկար ժամանակ, եղել են թե՛ տենդերներ, թե՛ տասնյակ միջոցառումներ, բայց միակ դեպքը՝ ինչում մեզ մեղադրում են այդ մեկ հարցազրույցն է: Այն, որ ես բժիշկ եմ, առանց իմանալու, որ բնակավայրերի կանաչապատումը դա կոմունալ հիգիենայի խնդիր է՝ ինչին ես նվիրել եմ իմ կյանքի 25 տարին և դասավանդում եմ, որպես դոցենտ Երևանի պետական բժշկական համալսարանի հիգիենա-էկոլոգիա ամբիոնում:

Քաղաքային կանաչապատումը ոչ՛ անտառագիտություն է, ոչ՛ էլ գյուղատնտեսություն: Այն ունի տասնյակ նրբություններ և բոլոր ստանդարտները, որոնց մասին այսօր խոսում էր պարոն Արեյանը, դրանք բոլորը մեր գիտությունից են գալիս: Մենք ենք ասում, թե որ ծառատեսակները պետք է տնկվեն փողոցներում՝ ֆունկցիոնալությունն ապահովելու համար, իսկ որոնք պետք է տնկվեն պուրակներում՝ դեկորատիվ, էսթետիկ հատկանիշներն ապահովելու համար:

Այժմ ինչեցնեմ հարցը, որը վերաբերում է ծառերի զանգվածային հատումներին: Մենք որդեգրել էինք մի քաղաքականություն՝ ոչ մի ծառ չհատել, ունենալով միջազգային փորձագետների եզրակացություններ, որ նման վարակի պարագայում Դուք չեք կարողանալու կայունացնել վիճակը, և պատրաստեք բնակչությանը նրան, որ միգուցե հարկ լինի հատել ծառերը:

Այն հարցազրույցը, որը Դուք մշտապես ցիտում եք՝ մենք տվել ենք այն ժամանակ, երբ Մաշտոցի պուրակում հատել էինք 5 մահացած թեղի, և այսօրվա տնօրենը մեզ հարցնում էր, թե ինչու՞ ենք հատել այդ ծառեր, և նրանց անհրաժեշտ էր բուժել, ամեն մլակի համար հարկավոր չէ ծառ հատել, քանի որ բոլոր թեղիներն էլ հիվանդ են Երևան քաղաքում: Երբ նա դարձավ տնօրեն՝ մոտեցումը փոխվեց, բայց ի տարբերություն ներկայիս տնօրենի՝ մենք ծառ չենք հատել, մենք ծառերը բուժել ենք, գույքագրել ենք, գնահատել ենք, անձնագրավորել ենք, այդ թվում՝ Կենտրոն վարչական շրջանում:

Հարցս հետևյալն է՝ 2021 թվականին մենք ամբողջությամբ այսօրվա աշխատող գլխավոր դենդրոլոգի հետ միասին, ով հանդիսանում է Ագրարային համալսարանի դոցենտ, և մեր գույքագրած ծառերի ցանկում չունեինք հրատապ, հատման ենթակա ծառեր, այն էլ հազարավոր ծառեր փողոցի երկայնքով: Ինձ հետաքրքրում է, թե ի՞նչ պատահեց 2023 թվականից ի վեր, որ արդեն բուժված թեղիները զանգվածային հատեցին:

Պարոն Ավինյան, ես Ձեզ բերեցի Ռուսաստանի Դաշնության ծառերի փորձագիտական կենտրոնի եզրակացությունը, ինչպես նաև Ֆրանսիայի լանդշաֆտային ճարտարապետության ասոցիացիայից և ԱՊՀ տարածքի, միջին Ասիայի երկրներից եզրակացություն, որ թույլատրելի չէ դա անել: Այստեղ ավագանու դահլիճում ես ելույթ եմ ունեցել, և ասել եմ մշտապես, որ Երևանում թեղիները խնդիր ունեն, բայց ես դեմ եմ

զանգվածային հատումներին, որովհետև դա բնակչության առողջության համար ուղիղ սպառնալիք է, ինչը մեր բնակիչները միևնույն է զգալու են:

Ինչու՞ չեն փակցվում ծառերի վրա իրազեկման թղթերը, որը մենք ներդրել էինք այն ժամանակ: Ինչու՞ են սկսել կրկին խորը էտի ենթարկել ծառերը:

Պարոն Ավինյան, երբ Դուք գտնվում էիք Ալեք Մանուկյան փողոցում և Ձեր կողքին գլխավոր դենդրոլոգն էր, նախկինում Բուսաբանության ինստիտուտի տնօրենը, նրանք Ձեզ ասում էին, իբրև, որ ինչպես ուզել այդպես էտել են ծառերը, ծառերը փչացան, այժմ պետք է հատենք: Մենք հանրայնացրել ենք, որ 2015 թվականին այդ նույն անձինք հանդիսանում են նախորդ բոլոր քաղաքապետերի, այդ թվում նաև՝ Ձեր խորհրդատուները, այժմ ո՞վ պետք է պատասխան տա այդ սխալ աշխատանքի համար, որի արդյունքում մենք այսօր ունենք այս պատկերը:

Տիգրան Ավինյան

- Տիկին Վարդանյան, մենք Ձեզ չենք մեղադրում նրա համար, որ Դուք մանկաբույժ եք, մենք Ձեզ մեղադրում ենք քաղաքական կեղծավորության համար, Դուք մեկը մեկին կրկնում եք այն թեզերը, որոնք այսօր մեր գիտնականներն ասում են: Այսինքն այն 20 գիտնականները, ովքեր զբաղվում են այս հարցերով, ովքեր որոշում են, թե որ դեպքերում ինչ է պետք իրականացնել, ասում են այն ինչը Դուք ասում էիք 5-6 տարի առաջ:

Գիտեք, երբ մարդ խոսում է մի բան, այնքան համապարփակ է խոսում, այնքան հիմնավոր է մատուցում նյութը, այնքան լավ է բացատրում, թե ինչու քաղաքի բոլոր թեղիները պետք է փոխարինվեն, թե ինչ խնդիրներ են նրանք առաջացնում, ինչ խնդիրներ ունեն, այդ խնդիրների բոլոր տեսակների մասին խոսում է, և դրանից հետո դառնում է ընդդիմադիր ավագանու անդամ, և իր խոսույթը 180 աստիճանով փոխում է, ուրեմն կներեք, թույլ տվեք Ձեզ մեղադրել կեղծավորության մեջ, որովհետև դա բացարձակ քաղաքական կեղծավորություն է: Սա քաղաքական քննադատություն է:

Ես հասկանում եմ, որ Դուք եղել եք «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի փոխտնօրենը, ես հասկանում եմ նաև այն հանգամանքը, որ ներկայումս «Կանաչապատում և շրջական միջավայրի պահպնություն» ՀՈԱԿ-ի կողմից Երևան քաղաքում կանաչապատման ծավալների կատարվող աշխատանքը շատ ակնառու է: Ձեզ մեկ բան խորհուրդ կտամ՝ հարկավոր չէ «խանդով» վերաբերվել, դա մեր քաղաքի և երևանցիների համար է կատարվում և հարկավոր չէ այդտեղ փորձել համեմատվել, մասնավորապես, երբ այդ համեմատության մեջ Դուք պարտվելու եք:

Տիկին Վարդանյան, քաղաքականության մեջ ամեն ինչ, ինչ Դուք ասում եք, կարող է Ձեր դեմ օգտագործվել: Հատկապես, երբ Դուք ասում եք բացարձակ ճշմարտություն, այդ ճշմարտությունն ամեն կերպ ճիշտ հիմնավորում եք և դրանից հետո 180 աստիճան այլ բաներ եք խոսում, միևնույնն է ոչ ոք չի մոռանա այն, որ Դուք 5 տարի առաջ ամեն բան ասել եք հիմնավոր, այժմ Ձեր իսկ հայտարարություններին հակադրվելով, ուզում եք մի քանի կետով մեզ խոցած լինեք:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի նաև «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահմանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Արմեն Բեգոյան

- Տիկին Վարդանյան, դրանք վաղ ժամանակներից ի վեր տարբեր գրքերից հանված ինչ-որ նախադասություններ են, որում հաշվի առնված չի գլոբալ տաքացումը և տարբեր հանգամանքներ:

Այո, ժամանակին Երևան քաղաքում շատ բաներ միգուցե չեն աճել, ինչը հիմա աճում է, սակայն ես պետք է խոսեմ նաև այն բանի մասին, որ Դուք մեղադրում եք մեզ թեղիներն ավելի արժեքավոր ծառերով փոխարինելու մեջ, մասնավորապես՝ Մաշտոցի պուրակում: Եթե մենք թեղիները փոխարինում ենք, Դուք՝ տիկին Վարդանյան, Հայկ Մարությանի հետ միասին թեղիները կտրեցիք, հատեցիք և այնտեղի «Զեյթունա», «Սիզընս» սրճարանների հայտնվելը Ձեր ձեռքի շնորհքն են:

«Ֆիզգառադոկ»-ը, որը համարվում էր հատուկ պահպանման տարածք, այդտեղ Դուք Հայկ Մարությանի հետ ոչ թե փոխարինեցիք ծառերը, այլ կտրեցիք, վերացրիք և կառուցեցիք բազմաբնակարան շենք: Կան լուսանկարներ, որոնք փաստում են Ձեր տնկած սոսիները Մաշտոցի պողոտայում, Աբովյան փողոցում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյան, խնդրեմ:

Արամ Թորոսյան

-Պարոն Ավինյան, ի՞նչ է կատարվում Հրազդան մարզադաշտի և դրան հարակից տարածքների հետ:

Երկրորդ հարցը.

Հակոբ Հակոբյան փողոցի հ.2 շենքին զուգահեռ կան առևտրային կրպակներ և գիտեմ, որ կա նախագիծ՝ դրանք քանդելու վերաբերյալ:

Արդյոք Երևանի քաղաքապետարանը դիտարկում է, որ Երևանում կարող է լինել ինչ-որ հատված, որտեղ կլինեն ոճային ձևավորված կրպակներ և տրամադրվեն փոքր ու միջին բիզնեսին: Օրինակ՝ ներկայումս Գլինկայի փողոցում կառուցվել է նոր կրպակաշար և կան շեղումներ, որի հետևանքով ներկայումս իրականացվում է դատական գործընթաց:

Արդյոք մտադրված ենք փոքր ու միջին բիզնեսի համար օգտակար լինել և ինչ-որ վայր տրամադրել:

Տիգրան Ավինյան

- Պարոն Թորոսյան, իրականում Ձեր մատնանշած խնդրի լուծումը կարգավորվում է տոնավաճառների կազմակերպմամբ: Այսինքն պետք է լինեն հասարակական տարածքներ, որոնք հնարավորություն կստեղծեն փոքր ու միջին բիզնեսի համար, նշեմ, որ այդպիսի տարածքներ կան: Եթե նմանատիպ տարածքների պահանջարկն ավելանա, նաև հաշվի առնելով այն պայքարը, որը Երևանի քաղաքապետարանը մղում է մայթերի վրա

տեղակայված տարատեսակ կրպակների դեմ, Ձեզ վստահեցնում եմ, որ պահանջարկ կառաջանա և կլինեն ներդրողներ, ովքեր ներդրումներ կկատարեն և այդ կրպակները կտրամադրեն վարձակալության:

Ինչ վերաբերում է Գլինկայի փողոցում կառուցված կրպակաշարերի հարցին, դա խայտառակություն է և տարատեսակ դատական որոշումների հետևանք է: Եթե չեմ սխալվում, այդ հասցեում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հարուցվել է քրեական գործ: Երբ ես խոսում էի նախկինում դատական որոշումների մասին, նաև նմանատիպ որոշումների մասին էի խոսում, որոնք անընդունելի են և աղավաղում են քաղաքային միջավայրը և կոռուպցիոն հսկայական ռիսկեր են պարունակում: Սա այդ դեպքն է:

Ուզում եմ հատուկ շեշտել, որ այս տեսակ երևույթների դեմ ամեն գնով պայքարելու ենք: Չի լինելու ո՛չ կոմպրոմիս, ո՛չ պայմանավորվելու և ո՛չ էլ զիջման հնարավորություն: Այսինքն մենք անընդհատ և անդադար պայքարելու ենք այդ պրոցեսների դեմ, ինչ տարատեսակ իրավական մեխանիզմներ էլ, որ չկիրառվեն:

Հրազդանի մարզադաշտի վերաբերյալ հարցը մասնավոր սեփականության հարց է, դեռևս առկախված է և լուծում չկա ու հարցը մեզ մոտ չէ:

Սիրելի՛ երևանցիներ, Երևանի քաղաքապետարանը վերջին երեք տարվա ընթացքում իրականացրել է ռեկորդային ծավալով կանաչապատման աշխատանքներ և բոլոր այն փորձերը, որոնք ընդդիմադիր մեր գործընկերներն իրականացնում են այդ աշխատանքների վրա «ցեխ» շպրտելով, ուղղակի անհիմն են և սպասարկում են իրենց քաղաքական օրակարգը:

Պարոն Բեգոյան, ես առաջարկ ունեմ.

Այն ծառերն, որոնք արտաքնապես ունեն կենսունակ տեսք, խնդրում եմ անցորդներին հարցնեք դրանց կենսունակ լինելու վերաբերյալ և հետո ռեզիստոգրաֆ սարքով ստուգենք: Օրինակ՝ Թումանյան փողոցում նախորդ տարի կանաչ, գեղեցիկ թեղին անկեց, որովհետև մեջը սփուչ էր: Նույնիսկ կան դեպքեր, որ այդ ամենը տեսանելի չէ և ընդդիմադիր մեր գործընկերներն օգտվում են այդ իրավիճակից: Բոլոր միֆերը պետք է ջարդենք և թույլ չտանք այդ օրակարգերն առաջ տանել:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն